

# ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՆՏ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔԻ 11-ՐԴ ՆՈՒՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 31-ՐԴ ՆՈՒՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 33-ՐԴ ՆՈՒՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Յ**.

1. «ՆՏ Ազգային ժողովի պարզամավորների դիմումի հիման վրա՝ ՆՏ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթների՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Նաշվի առնելով, մի կողմից, դիմողների խնդրանքը՝ սույն դիմումը հնարավորինս կարճ ժամկետներում քննության առնելու վերաբերյալ, ինչպես նաեւ նկատի ունենալով հարցի հրապարակությունը, մյուս կողմից՝ ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 31, 37 եւ 68-րդ հոդվածների պահանջներից՝ գործը քննության նախապարաստելու եւ դատավարական ժամկետների ու ընթացակարգերի վերաբերյալ, սույն գործի դատաքննությունն սկսել 2012թ. մայիսի 5-ին, ժամը 10.00-ին:

3. Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ գործով որպես զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Ա. Խաչատրյանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով՝ սույն գործով որպես պարասխանող կողմ դատավարությանը ներգրավել վիճարկվող ակտն ընդունած պետական մարմնին՝ ՆՏ Ազգային ժողովին:

5. Ընդունել դիմողների առաջարկը եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով՝ համարելով, որ տվյալ գործը ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, գործի դատաքննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով:

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՆ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**